ւորեսցի ամենայն հատոր և հատորք Օրինաց որում ընդունելի ամենայն հայոց գտցի արձակապէս կարող է հաստատել և հռչակել ամենայն ժողովրդոց և մուծանել ընդ Օրէնս մեր։

ԳԼՈՒԽ ՄԼԲ.

Ամենայն տանուտէր փոխանորդ 12000 տանց արժան է ընդունիլ 'ի առաքողէ իւրմէ տարէն 3000 դահեկան երծաթ, զի մնասցեն զինքեանք անպակաս 'ի հարկաւորութենէ և ազատ և ոչ պաշտօնեա ումեքէ բայց 'ի յաշխարհէ իւրմէ և ջատագով ընդ դէմ ամենայն անօրէնութեան գործողաց ըստ Օրինաց։

ԳԼՈՒԽ ՄԼԳ.

'Ի սրբոյ աթոռէն Հայրապետութեան ամենայն հայոց, Արք Եպիսկոպոս մի ընտրեսցի զի մտցէ առ տունն հայոց տեղի փոխանորդի ամենայն էկլէզիաստիկաց, և Եպիսկոպոսն այն ընդ ամենայն բան խորհրդոյ համարեսցի իբրև երկու տանուտէր մի հոգևոր և մի մարմնաւոր և սայ նստցի 'ի վերայ երկրորդ աթոռոյն 'ի առաջի աստիճանի աջ թևին տանն հայոց, սա ստանայցէ հայրապետէ հայոց տարէն 3000 դահեկան երծաթ վասն ծախսոյ իւրոյ։